

ՀԱՅ ԿԵԼՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԹԻՒԹՅԱՀԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՃԳՆԱԺԱՄԸ.

Անլուր վայրագութիւնը դարձեալ զլուխ է բարձրացրել պատուհաների բուն երկրում Տաճկաստանում և այս անգամ դարձեալ հայերն են, որ ենթարկւում են վայրենի քրդերի ու մոլեռանդ մահմեղականների գաղանութիւններին։ Երբ չորս տարի առաջ փոխութիւմ էր Արդիւլ Համիզի կառավարութիւնը և երկիրը սահմանադրական էր հոչակւում։ շատ շատերը և բուն ժողովուրդը թեթեութեան մի զգացումնվայրում էին, յուսալով, որ զրանով Տաճկաց ընդարձակ կառավարութեան մէջ վերջանալու էր կամայականութիւնը ու թագաւորելու էր կարգը։ Բացարձակ ազատութիւնը չէր որ պահանջւում էր, այլ ամենահասարակ և հասկանալի մի բան, անձի և ունեցուածքի անձեռնամիսելիութիւն։ Բայց հենց այն ժամանակները կային թերահաւատներ, որոնք զլուխները թափահարում էին ու կրկնում։ Տաճիկ ժողովրդի, քրդի ու մահմեղական կրօնի հետ անյարիր է կարգն ու կանոնը, անյարիր է սահմանադրութիւնը։

Եւ նրանք մարդարէներ չեն, այդպէս մտածողները, նրանք տարբերութիւմ էին լաւատեսներից միմիայն նրանով որ թուրք ցեղը աւելի լաւ էին ճանաչում։ մահմեղական կրօնի ոգուն աւելի էին թափանցում ու քրդերի բնազդներն աւելի լաւ էին ուսումնասիրած։ Աւ զարմանալի բան չէ, որ թուրքը իր կրօնով ու ֆանատիզմով տղիտութեամբ ու մտաւոր խաւարով միշտ միենոյն է մնում թէ Արդիւլ Համիզի անսահման, բացարձակ կառավարութեան մէջ, թէ սահմանադրական կազմի ժամանակ և աւելի կը վատթարանայ վաղը, եթէ հանրապետութիւն ունենայ։ Մենք բացարձակ սխալ ենք համարում մտածողութեան այն եղանակը, որ այսօրուայ հատուկտոր կոտորածներն ու մաս-

սայական արհաւիրքները այս կամ այն կառավարութեան փոփոխութեան հետ է կապում։ Այդ կոտորածները կան այսօր, երբ երկիրը սահմանադրական է, նրանք կատարում էին և երեկ, երբ անսահման կամացականութիւնն էր իշխում։ վերջապէս նրանք ոչ մի նորութիւն և ոչ մի տարօրինակ բան չեն Տաճկաստանի մէջ, ուր քրիստոնեայ ժողովուրդը դարեր շարունակ ենթակայ է այդ մշձաւան-ջին։ Ասացէք խնդրեմ; Երբ չկար Տաճկաստանում կոտորած, Երբ է տաճիկ կամ թուրք ցեղը համբերատար ու հանուրժող ոգով նայել գէպի այլ կրօնները, Երբ է նա փոքր իշատէ տանելի վերաբերմունք ցոյց տուել զէպի իւր հպատակները։ Նրա հպատակները եղել են միշտ արհամարհելի մի տարր, ույայ, եղել են և այսօր էլ նոյնն են մնում։ Քրիստոնեայ ցեղերը ինչեր են քաշել այդ վայրագ ու մոլեռանդ ազգի ձեռքից։ յատկապէս հայերը ինչպէս արիւնաբամ են եղել թուրք, թաթար ու տաճիկ ցեղերից, որոնք 11-րդ դարից սկսած մինչեւ այսօր շարունակում են իրանց արիւնաբամ թիւնը։ Պատմութեան մէջ հրաշք-ներ չեն կատարուում և թուրք ցեղը երէկուանից մինչեւ այսօր չի կարող միանգամից ֆառուստի կերպարանափոխութեանը ենթարկուել։ Հինգ վեց հարիւր տարուայ ընթացքում շատ քիչ բան է փոխուել Արևելքում յատկապէս այդ թուրք ցեղի մէջ և ոչինչ չկայ այսօր մեզ համոզելու, որ զրութիւնը Տաճկաստանում վաղը կը բարենորոգուի։ Ինքը տաճիկը կամ թուրքը երբէք իրանից չի անի այդ քայլը, չի անի, որովհետեւ դա հակառակ է նրա բոլոր տրադիցիաներին, նրա կրօնին, համոզմունքներին, նրա զգացմունքներին ու մոլեռանդութեանը։ Տաճկաց կառավարութիւնը միշտ պատրաստակամութիւն է ցոյց տուել երկիրը խաղաղացնելու, ու քորմներ մոցնելու, երբ նրա զլիին արտաքին ուժ է եղել, երբ քաղաքական արտաքին հանգամանքները ճնշել են նրան։ Ինչեր չխոստացաւ տաճիկը մինչեւ օրս — մի տարի է, որ նա խոստանում է։ Վերջապէս համոզուենք, որ դա լոկ պատրանք է և հաւատալը տհասութիւն։ Միմիայն ուժը կարող է Տաճկաստանում

այժմ կարգը վերականգնել, միմիայն ուժը կարող է ազատել հային քրդի անպատասխանատու վայրագութիւնից: Երկուսից մէկը՝ կամ հայն ևս պէտք է զինուի պետութեան հաշով, որպէս զի այդ անկարգ իշխանաւորների ապիկար կառավարութեան օրով իւր անձն ու ունեցուածքը պաշտպան՝ լ փորձի, կամ այդ մշտական մղձաւանջին վերջ զնելու համար պէտք է արտաքին միջոցների դիմի, ազգու և ներգործական միջամտութեան:

Լսում ենք, Տաճկաստանի Հայկական գաւառներում ղբութիւնն այն աստիճան սպառնական է դարձել, հատ ու կտոր կոտորածներն այն աստիճան ահարկու բնաւորութիւն ստացել, որ Հայոց պատրիարքն ու ազգային մարմնի վարչութիւնները հրաժարական են տուել—այդպիսով զդաւ տալով Բարձրագոյն Դրան բոպէի լոգութիւնը: Մենք չենք հասկանում Հայոց պատրիարքի այդ քայլը: Տաճկաց կառավարութիւնը վաղուց սովորել է արհամարել այդ միջոցն ըստ զա հնացած ու իւր իմաստը կորցրած մի զէնք է, որ այժմ ոչ մի ազգեցութիւն չզործելու վտանգի մէջ է: Պէտք է իւր զիրքի վրայ մնալ մինչեւ վերջ, մանաւանդ այն կրիտիքական բոպէին, երբ երկրի ազգաբնակութիւնը սրի բերան է տրւում: Պէտք է ծեծել բոլոր զոները, ծեծել և ծեծկել—անել ամեն քայլ—տեղն եկած ժամանակ դիմել նաև զրոյի միջոցներին, զիմումներ անել որտեղ կարող ես և ինչով կարող ես և թող Տաճկաց պետութիւնն ինքը հրաժարեցնի Հայոց պատրիարքին: Կոռուի նոր միջոցներ ու ձեւեր պէտք է որոնել, որովհետեւ այդ զէնքերը, որոնք ուրիշ, բարեկարգ պետութիւնների մէջ ազգու կարող էին լինել, այժմ բթացել են ու կորցրել որ և է ազգեցութիւն: Վանի և Բաղեշի վիլայէթներում հայերին կոտորող վայրագ քրդերի համար ինչ արժեք կարող է ունենալ այդպիսի հրաժարականները. ճիշտ նոյն արժեքը ունեն նրանք նաև Պօլսի իշխանութիւնների համար:

Անցեալ օրերը (օգոստոսի 24) Պօլսում գումարուած ազգային ժողովի մէջ պ. Ա. Գարաեանը մի ճառ է արտասահնում, որը Տաճկաստանի մամուլի մէջ մեծ գովեստների է.

արժանացել։ Նա հետեւեալ կերպով է ամփոփում իր երկար ճառի իմաստը. «Վերջին անգամ ըլլալով կը լրինիմ, հայ աղղին մարտիրոսութեան վերջ մը տալու համար կալվը չէ, որ պակսած է և կը պակսի օսմ. սահմանադրական կառավարութենէն, այլ նպատակայարմար միջոցները։ Այս անդրդուելի հաւատքով է, որ կը փութամ ամբողջ հայ աղղին անկեղծ զգացմանց թարգման ըլլալ — զոչելով. կեցցէ, կեցցէ, յաւիտեան կեցցէ օսմ. սահմանադրական վեհապանձ պետութիւնը»։ Ի հարկէ, պ. Գարաեան կարող է կեցցէ զոչել, ինչքան կամենայ, բայց նրա ակնարկած ճառի մէջ էական խնդիրը զլիոիվայր է զրուած։ Օսմանեան սահմանադրական պետութիւնը այս չորս հինգ տարուայ մէջ եթէ ուզէր փառաւոր կերպով կարող էր միջոցներ զտնել Տաճկաց Հայաստանը քրդերի աւագակային յարձակումներից ազատ կացուցանել։ Բաւական էր միմիայն հաստատ, անկեղծ ու անդրդուելի ցանկութիւն։ Հէնց այդ ակնարկուած կամքն է այստեղ, որ շարունակ պակսել է և միշտ էլ կը պակսի — քանի Օսմանեան կառավարութեան զործերը իրան թողնուին։ Մենք կողմնակից չենք, առհասարակ, որ պետութիւնների ներքին անկախութիւնը վտանգուի արտաքին միջամտութիւնից. բայց քանի որ Տաճկաստանի անցեալ և ներկայ ռեժիմը անկարող և ապիկար է երկրում ամենատարբական կարգը մոցնելու, քանի որ այդ պետութեան մէջ մորդասպանութիւններն ու աւազակութիւնները ոչ միայն չեն վերահում, այլ նոյն իսկ երկրի բարձր կառավարութեան՝ ներքին զործոց մինիստրի կողմից սովորական բան նն յայտարարում։ որի համար չարժէ անհանգստանալ - այդպիսի պետութեան խօսք հասկացնել կարող է միմիայն ուժը — արտաքին զօրեղ և վճռական միջամտութիւնը։

Գ. Ալբունեան